


Ճ Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԿՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՀՍ
2008 թ. հունվար-ապրիլ թիվ 07

ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԻ ՆԵՐՔՈ

ԱՆՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԱԿՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

2007 թվականի նոյեմբերի 26-ին Երևանում կայացավ Հայաստանի Արիեստակցական կազմակերպությունների Կոնֆեդերացիայի համագումարը: Պատվիրակված պատգամավորներից 36-ը կին էին, 83-ը՝ տղամարդ:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև Արիմիությունների Համընդհանուր Կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար Վլադիմիր Շերբակովը և աշխատակազմի ղեկավար՝ ԱՀԿ գործերի կառավարիչ Վլադիմիր Իվանովը: Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ Սերժ Սարգսյանի ողջույնը ներկայացրեց պատգամավորներին ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թովուզյանը:

Համագումարը լսեց ՀԱՄԿ-ի հաշվետու զեկույցը, որը ներկայացրեց ՀԱՄԿ-ի նախագահի առաջին տեղակալ Հրաչ Հովհաննիսյանը: Նա մասնավորապես նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանը եղել է կայուն և արդյունավետ աշխատանքի ծամանակ: 2005 թվականի հունիսին գործողության մեջ դրվեց նոր Աշխատանքային օրենսգիրքը, որը այժմ մեծ դեր ունի աշխատանքային հարաբերությունների կարգավորման գործում: Դրա հետ մեկտեղ բացահայտվեցին օրենսգրքի որոշակի թերությունները և ՀԱՄԿ-ը պատրաստեց 60-ից ավելի առաջարկություններ օրենքում փոփոխություններ մտցնելու համար:

Կառավարության և գործատուների միության հետ կառուցողական համագործակցության հարաբերություններ են հաստատվել: Ստորագրված է եռակողմ համաձայնություն Արժանապատիվ աշխատանք 2007-2011 թթ. ծրագրի իրականացման մասին: Այժմ արիմիությունների ակտիվ մասնակցությամբ վերանայվում է Աղքատության հաղթահարման Ծրագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է իրավաբանական աշխատանք, արիմիության անդամներին տրամադրվել են խորհրդատվություններ, ելույթներ է կազմակերպվել ռադիոյով և հեռուստատեսությամբ: ՀԱՄԿ-ը այս ժամանակաշրջանում 54 անգամ հանդես է եկել դատական տարբեր ատյաններում աշխատողների խախտված իրավունքների պաշտպանության հարցերով:

Հանրապետության արիմիությունները դուրս են գալիս միջազգային ասպարեզ, զարգացնում են

համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

Սակայն արիմիութենական աշխատանքում առկա են որոշակի դժվարություններ: Այսօր արդյունաբերական ձեռնարկություններից երեք չորրորդը մասնավոր սեփականություն են և դրանց մեծ մասում չկան արիեստակցական կազմակերպություններ: Իսկ եթե աշխատողները հարցեր են բարձրացնում, հաճախ ենթարկվում են հետապնդումների, ընդհուպ մինչև աշխատանքից ազատում:

Երկրում գոյություն ունի զգալի գործազրկություն և որպես հետևանք, բնակչության որոշ խավերում, հատկապես տղամարդկանց շրջանում, աշխատանքային միգրացիա: Այս խնդիրը միշտ պետք է լինի արիմիությունների ուշադրության կենտրոնում:

Ջեկույցողը ընդգծեց ԱՀԿ-ի դերը՝ որպես ԱՊՀ երկրների արիմիությունները միավորող ազդեցիկ ուժի:

Ջեկույցից հետո ելույթ ունեցավ ՀԱՄԿ-ի նախագահ Մ.Հարությունյանը, նա նշեց, որ 24 տարի ղեկավարել է Հայաստանի արիմիությունները, շնորհակալություն հայտնեց համախոհներին կատարած աշխատանքի համար և հայտարարեց, որ առողջական վիճակից ելնելով չի դնելու իր թեկնածությունը նախագահի պաշտոնի համար: Նա համոզմունք հայտնեց, որ Հայաստանի արիմիությունները կհասնեն տեսանելի արդյունքների աշխատողների իրավունքների և շահերի պաշտպանության գործում:

Ելույթ ունեցան նաև Գառնիկ Վաղարշակյանը՝ ԲՈՒՀ-երի աշխատողների արիեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահը, Եվգենի Կոժեմյակինը՝ լեռնագործների, մետալուրգների, ոսկերիչների արիեստակցական կազմակերպությունների ճյուղային միության նախագահը, ժանետա Թորոսյանը՝ մշակույթի և ԶԼՍ-ների աշխատողների արիեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահը, Էդուարդ Թումայանը՝ առողջապահության աշխատողների արիեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահը:

Ելույթ ունեցողները խստապահանջ մոտեցան արիմիությունների աշխատանքի գնահատմանը և տարբեր առաջարկություններ արեցին:

Ջերմորեն ընդունվեց ԱՀԿ-ի գլխավոր քարտուղար Վլադիմիր Շերբակովի ելույթը: Համագումարի պատգամավորները հաստատեցին ՀԱՄԿ-ի 2008-2012 թթ. գործունեության ծրագիրը, ՀԱՄԿ-ի

կանոնադրությունը՝ փոփոխություններով և լրացումներով:

ՀԱՄԿ-ի նախագահի և տեղակալների ընտրությունները անցան երկու փուլով: Նախագահի երեք թեկնածուներից երկրորդ փուլ անցան ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Հ.Հովհաննիսյանը և առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային

միության նախագահ Է.Թումայանը: Քվեարկության արդյունքներով երկրորդ փուլում ՀԱՄԿ-ի նախագահ ընտրվեց **Էդուարդ Ալեքսանի Թումայանը**: ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալներ ընտրվեցին **Բորիս Մանուկի Խարատյանը և Խաչիկ Վիկտորի Առաքելյանը**:

ԱՀԿ-ի պատվիրակությանը Հայաստանում գտնվելու ժամանակ ընդունեց ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Փետրվարի 4-5-ին մայրաքաղաքի «Էրեբունի» հյուրանոցի կոնֆերանսների սրահում տեղի ունեցավ ՀԱՄԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպված «Ոչ ֆորմալ տնտեսության խնդիրները Հայաստանում» թեմայով «Կլոր սեղան», որին մասնակցում էին պատասխանատու ներկայացուցիչներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունից, Գործատուների միությունից, Աշխատանքի պետական տեսչությունից, Աշխատանքի միջազգային կազմակերպությունից, ՀՀ բանկերի միությունից:

Ողջունելով ներկաներին՝ ՀԱՄԿ-ի նախագահ Էդուարդ Թումայանը կարևորեց քննարկվող խնդիրը, որը առկա է ոչ միայն մեր հանրապետությունում, այլև ԱՊՀ և աշխարհի տարբեր երկրներում:

«Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի և Աշխատանքի կազմակերպության» ոչ ֆորմալ տնտեսության վերաբերյալ ծրագիրը

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար: Տենդենցները, սոցիալական ազդեցությունները և արհմիությունների ռազմավարությունը» թեմայով հանդես եկավ ԱՄԿ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համակարգող Սերգիուս Գլովակցկասը: Նույն կառույցի մեկ այլ ներկայացուցիչ՝ Մարգարիտա Տուխի վերլուծական ելույթը նվիրված էր ոչ ֆորմալ զբաղվածության ֆենոմենին: Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի փորձագետների ելույթների առանցքում արհմիությունների ստեղծման խնդիրն էր ոչ ֆորմալ աշխատողների շրջանում: ԱՄԿ փորձագետները իրենց տեսակետները արտահայտեցին սոցիալական գործընկերների հետ համագործակցության ձևերի ու մեթոդների առնչությամբ:

Փետրվարի 7-8-ին հարցի քննարկումը շարունակվեց Ծաղկաձորում՝ ՀԱՄԿ-ի երիտասարդության և կանանց հանձնաժողովի անդամների մասնակցությամբ:

ԱՄՓՈՓԵԼՈՎ 2007թ. ՃՀՄ ԱՆԴԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՃՀՄ անդամ կազմակերպությունների կողմից ներկայացրած 2007թ. վիճակագրական հաշվետվություններից պարզվեց, որ 2007 թվականին 2006 թվականի հետ համեմատ ՃՀՄ արհմիության անդամները ավելացել է ընդամենը 148-ով:

2007 թվականին ՃՀՄ անդամ կազմակերպությունների թիվը 622 էր: Չնայած որ կազմակերպությունների թիվը ավելացել է՝ արհմիության անդամների թիվը տարածքներում անհասկանալի կերպով նվազել է 438 անդամով: Երևան քաղաքում 2007թ. ավելացան 3 անդամ կազմակերպություն՝ ԲՍՓ գործակալության արհմիությունը 194 անդամով, աշխատանքի պետական տեսչության արհմիությունը 28 անդամով, «Լուսանշան» ՊՈԱԿ-ի արհմիություն 110 անդամով: Ավելացել են նաև արհմիության անդամների թիվը արդեն գործող արհմիություններում, ինչի հետևանքով Երևան քաղաքի արհմիության անդամների թիվը 8547-ից աճեց մինչև 9133-ը:

Մեծ ուշադրություն է դարձվում տեղերում կոլեկտիվ պայմանագրերի կնքման հարցին: Կոլեկտիվ պայմանագրերը կնքվում են առավելագույնը 3 տարի ժամկետով, հետևաբար պայմանագրեր կնքելու գործընթացը մշտապես է իրականացվում: Կնքվում են նոր պայմանագրեր այն կազմակերպություններում, որտեղ գործող պայմանագրերի ժամկետը լրացել է: Ըստ ներկայացված հաշվետվությունների՝ անդամ կազմակերպություններում կնքված է 440 կոլեկտիվ պայմանագրեր: 2007թ. գործող կոլեկտիվ պայմանագրերի թիվը 28-ով ավել էր 2006 թվականի համեմատ:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՆ

Համկ-ի խորհրդի որոշմամբ կազմավորվել են ՀԱՄԿ-ի խորհրդի մշտական գործող 4 հանձնաժողովներ, որոնցում պատվիրակված են նաև Հայաստանի պետիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչները

1. աշխատավորների սոցիալ-տնտեսական շահերի և աշխատանքի պաշտպանության հանձնաժողովում՝ ՃՀՄ աշխատանքի պաշտպանության գլխավոր մասնագետ Անահիտ Ասատրյանը

2. ՀԱՄԿ-ի սեփականության տնօրինման, օգտագործման և օտարման՝ հանձնաժողովում՝ ՃՀՄ նախագահ Ելենա Հակոբյան
 3. Գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովում՝ Արաբկիրի թաղապետարանի արհմիության նախագահ Հռիփսիմե Սառիկյանը
 4. Երիտասարդական հանձնաժողովում՝ Հայաստանի սոցապահովագրության պետական ծառայության արհմիության նախագահության անդամ Գայանե Բադալյանը
- Արդեն կայացել են հանձնաժողովների առաջին նիստերը:

* * *

ՃՀՄ նախագահության որոշմամբ կազմավորվեց 2 հանձնաժողով՝ կանոնադրական փոփոխություններ կատարելու նպատակով հետևալ կազմով՝ Ե.Հակոբյան - ՃՀՄ նախագահ, Ռ.Չոբանյան - ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատողների արհմիության նախագահ, Ռ.Սահակյան-Արտաշատի տարածքային միության նախագահ, Մ.Ոսկանյան-ՀՀ ոստիկանության պետ.պահպանության վարչության արհմիության նախագահ, Ա.Հակոբյան - Արարատի տարածքային միության նախագահ, Անահիտ Ասատրյան - ՃՀՄ աշխատանքի պաշտպանության գլխավոր մասնագետ և 2008-2012 թ.թ. ՃՀՄ գործունեության ծրագիրը մշակելու նպատակով հետևյալ կազմով՝ Ե.Հակոբյան - ՃՀՄ նախագահ, Գ.Հովհաննիսյան - ԱԳՆ աշխատակազմի

աշխատողների արհմիության նախագահ, Ա.Հովհաննիսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի աշխատողների արհմիության նախագահ, Կ.Վարդանյան - Գյումրու տարածքային միության նախագահ, Անահիտ Ասատրյան - ՃՀՄ աշխատանքի պաշտպանության գլխավոր մասնագետ, Հ.Սահակյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում գործող սոցապահովագրության պետական ծառայության աշխատողների արհմիության նախագահ, Անդրանիկ Գևորգյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատողների արհմիության նախագահ: Հանձնաժողովները գործում են:

Աշխատանքի օրվա կապակցությամբ

Մայիսի 1-ի՝ Աշխատանքի օրվա կապակցությամբ ՃՀՄ իր հաշվին Մոսկվա կինոթատրոնում կազմակերպեց Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իսպանիայի համատեղ ուժերով նկարահանված Կեն Լոուչի “Հաց և վարդեր” սոցիալ-ռոմանտիկ դրամայի դիտումը Երևանի բոլոր անդամ կազմակերպությունների համար: Ֆիլմի ամբողջ ընթացքում ընդգծվում է արհմիության դերը

աշխատանքային պայմաններին, աշխատավարձի չափին վերաբերող հարցերի լուծման գործում: “Աշխատավոր մարդուն պետք է հաց, բայց նաև վարդեր են պետք”, - սա է ֆիլմի գլխավոր միտքը: ՃՀՄ-ի կողմից տարբեր հեռուստա-ընկերությունների միջոցով բարի մաղթանքներով շնորհավորական ուղերձներ հղվեցին աշխատավորներին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

2008 թ. ապրիլի 15-ին, 16-ին ՃՀՄ նախագահ Ելենա Հակոբովան ք. Մոսկվայում մասնակցեց Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի (ԱՄՖ) Խորհրդի և Ռուսաստանի Դաշնության պետհիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիության Կենտրոնական Կոմիտեի (ՌԴԿԿ) նախագահության նիստերին:

2008 թ. ապրիլի 15-ին կայացավ ՌԴԿԿ նախագահության նիստ, որի մասնակիցներն էին, բացի նախագահության անդամներից, Ռուսաստանի Դաշնության բոլոր նախարարությունների ներկայացուցիչները, տարբեր բարձր աստիճանի պաշտոնյաներ և ԱՄՖ Խորհրդի անդամները՝ ԱՊՀ երկրների մեր հարակից ճյուղային միությունների նախագահները: Օրակարգում քննարկման էին դրված 17 հարցեր, որոնցից կարևորներն էին՝ ճյուղային մակարդակով տարբեր նախարարությունների հետ 2007 թ. կնքված կոլեկտիվ պայմանագրերի կատարման և 2008 թ. սոցիալական գործընկերության զարգացման մասին, 2007 թ. արհմիության հիմնական վիճակագրական ցուցանիշների մասին, տարածքային անդամ կազմակերպությունների

կողմից 2007 թ. գործունեության ծրագրերի կատարման մասին, 2007 թ. արհմիության կոմիտեներում աշխատանքի պաշտպանության գործունեության արդյունքների և հաշվետվությունների ամփոփման մասին, արհմիութենական կադրերի պատրաստման, ձևավորման և կատարելագործման մասին հարցերը և այլ:

2008 թ. ապրիլի 16-ին կայացավ ԱՄՖ Խորհրդի նիստ, օրակարգում քննարկման էին դրված հետևյալ հարցերը՝ ի կատարումն ԱՄՖ 4-րդ կոնգրեսի որոշումների հեռանկարային ծրագրի հաստատման, 2007 թ. ԱՄՖ-ի աշխատանքային պլանի կատարման և 2008 թ. աշխատանքային պլանի, անդամ կազմակերպությունների անդամավճարների չափի և վճարման կարգի, Լատվիայի ճյուղային միության ԱՄՖ-ի կազմից դուրս գալու, 2007 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականի և 2008 թ. նախահաշվի, 2008 թ. հունվարի 1-ի դրությամբ հիմնական վիճակագրական ցուցանիշների մասին:

Հայաստանի պետհիմնարկների ՃՀՄ-ի տարեկան անդամավճարի չափը 2008 թվականի համար սահմանվեց \$400:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Միգրացիայի Միջազգային Կազմակերպության Հայաստանյան առաքելությունը “Իրազեկված միգրացիա. Հարավային Կովկասի և Եվրոմիության միջև միջ-տարածաշրջանային երկխոսության ու ազգային մակարդակով կարողությունների զարգացման միջոցով ինտեգրված մոտեցում օրինական միգրացիայի նպաստմանը” ծրագրի շրջանակներում 2008 թ. ապրիլի 21-25 Երևանի Թերջան հյուրանոցում կազմակերպեց վերապատրաստման դասընթաց “Աշխատանքային միգրացիայի կառավարում” թեմայով: Դասընթացին մասնակցեցին Տարածքային կառավարման նախարարության Արտաքին գործերի նախարարության, Զբաղվածության պետական ծառայության, Ոստիկանության և ՀԱՄԿ ներկայացուցիչներ: Միջազգային աշխատանքային միգրացիայի, դրա միտումների և ազդեցության, անկանոն աշխատանքային միգրացիայի կանխարգելման և կրճատման մասին տեղեկություն հաղորդեց ՄՄԿ-ի Գանայի առաքելության ներկայացուցիչ Ջո Ռիսպոլին: Կազմակերպված աշխատանքային միգրացիայի օգուտների ավելացմանն ուղղված քաղաքականության մասին

տեղեկացրեց ՄՄԿ-ի օժանդակված միգրացիայի վարչության պետ Ուիլյամ Բարիգան: Ելույթ ունեցան նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության ներկայացուցիչ՝ Ա.Սարգսյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատավարձի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Քոչարյանը, ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության միգրացիայի ռեսուրս կենտրոնի տնօրեն Ռ.Գասպարյանը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության իրավաբանական վարչության պետ Ա. Հասսայանը, միգրացիոն գործակալության ապաստանի բաժնի առաջատար մասնագետ Ք. Խաչատրյանը: Դասընթացների մասնակիցներին տրվեցին վկայականներ:

ՀԱՄԿ-ի կողմից դասընթացներին մասնակցեցին Իրինա Հակոբյանը և Էլեն Մանասերյանը: Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ՃՀՄ-ի կողմից դասընթացներին մասնակցեց “Զբաղվածության պետական ծառայություն” գործակալության արհմիության նախագահ Սվետլանա Օհանյանը: